

զիտական ընկերութեան յիշատակարանների մէջ:

Կարսի փոխանորդ Արժ. Եղիշէ վարդ. Մուրագեան ութամնեայ բացակայութիւնից յեաոյ Ս. Պետերբուրգում Մայր Աթոռ եկաւ և իւր գործերի հաշիւը Նորին վեհափառութեան ներկայացնելուց յետոյ մեկնեցու իւր պաշտօնատեղին՝ Կարս:

Արժ. Կոմիտաս վարդապետ Դեօրգեան՝ որ երեք տարուց ի վեր Գերմանիայում ուսումնասիրում էր երաժշտութեան արուեստը, վերադարձաւ Մայր Աթոռ և սահմանեց Դեօրգեան Ծեմարանի երաժշտութեան ուսուցչի պաշտօնը:

Վեհ. Հայրապեաի հրամանաւ ա. Էջմիածնայ վանքի հիւրնկալ Արժ. Խաչակ վարդ. Տ. Միքայէլեան Դորու յաջորդ նշանակուեցաւ:

Ս. Էջմիածնայ միարաններից Արժ. Բենիկ վարդապետ կարգուեցաւ տեսուչ Երեանի Ծեմական դպրանոցին:

Երեանի Ծեմի Առաջ. Փոխանորդ Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսի համար, որ առաջարկուած էր Բեսարարիոյ Ծեմի առաջնորդ, ստացուեցաւ Կայսերական հաստատութեան վաւերագիրը: Ն. Բ. Մըրադնութիւն պատրաստուում է մեկնել գեղի իւր նոր պաշտօնատեղին:

Տպարանական Ժողովի անդամ Շնորհ. Ղազար սարկաւագ Նորին Վեհափառութեան կողմից թույլտուութիւն ստանալով՝ պր. Մանթաշեանի բարերարութեամբ Դորպատ գնաց՝ համալսարանում ուսանելու համար: Նրա տեղ Տպարանական Ժողովի անդամ կարգուեցաւ ոյս տարօւ այ Ծեմարանաւարաններից Շնորհ. Դրիգոր սարկաւագ:



## ԾԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԹՈՅ.

Դեօրգեան Ծեմարան մանել յանկացող

աշակերտանների, ինչպէս և անցեալ տարուաւնից վերաբնների աշակերտանների քննութիւնները սկսան սեպա: 1-ից և առեցին մինչեւ սեպա: 5: Այս տարուայ նոր ընդունուած տշակերտանների թիւն է աւելի քան քառասուն: Դասերն սկսան սեպա: 7: Երեքշարթի օրը:

Այս տարի Ծեմարան հրաւիրուած նոր ուսուցիչներն են: Արժ. Կոմիտաս վարդպապետ Գևորգիան՝ որ նոր և վերադաբել Գերմանիայից և աւանդելու և եկեղեցական երաժշտութիւնն: Պետերբուրգի համալսարանի իրաւարանական բաժնի նորաւարաւ կանգիտատ պր. Միքայէլ Տիգրանեան՝ որ աւանդելու է եկեղեցական իրաւագիտութիւնն: պր. Յովհաննես Բախչեան՝ որ պետք է աւանդել Ռուսաց լեզու: Երեք յարդելի ուսուցիչներն արդյուն սկսել են իրենց դասերը:

Պաշտօնի են Հրաւիրուած նաև անցեալ տարուայ Ծեմարանաւարտներից՝ Քերորէ Միքարեան, իրրե վերակացու, և ոյս տարուայ աւարտողներից՝ Յակոբ Արխատակիսեան, իրրե ուսուցիչ ստորին դասարաններում:

Ծեմարանի Ժեսուչ և Արարատի խմբագիր Տ. Կարապետ վարդպապետ ընտանեկան պատճառներով երկու շաբաթուայ համար արձակուրդ ստացած լինելով հայրենիք գնալու, օգոստ. 28-ին վերադարձաւ և անմիջապէս դրագուել սկսաւ նորեկների ընդունելու թիւնց քննութիւններով:

## ՏԵՇԱԿԱՑԱՅ. Ք.



## Տ. ԿՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԵՄԹՁԵԱՆ

Տ. Գրիգորիս եպիսկոպոս Ալեմթձեան՝ որ բաւական ժամանակէ ի վեր տառապում է, ուղեղի կակղացում կոչուած ծանր հիւանդու-